ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եկեղեցին հավատացյալների կազմակերպված համայնքն է: Այն կազմված է մկրտված անձանցից, որոնց միավորում է միեւնույն հավատքը, Ս. Հաղորդությունը, Սուրբ Խորհուրդները՝ գտնվելով նույն հոգեւոր իշխանության ներքո: Հոգեւոր այս իշխանությունն իրականացնողները Եկեղեցու հեգեւորականներն են, ովքեր ծառայում են Աստծուն, ուսուցանում ու օրհնում են հավատացյալներին եւ առաջնորդում Եկեղեցին: Ծառայելու, ուսուցանելու, օրհնելու եւ առաջնորդելու այս իշխանությունը չի տրվում ընտրության կամ նշանակման միջոցով, այլ այն փոխանցվում է Ձեռնադրության Սուրբ Խորհրդի միջոցով:

Ձեռնադրությունը Եկեղեցու կարեւորագույն խորհուրդներից է: Ձեռնադրության միջոցով անձը ստանում է Եկեղեցու սպասավորի սրբազան պարտականությունները կատարելու իշխանությունն ու շնորհը: Ձեռնադրությունը խորհուրդ է, որի միջոցով Սուրբ Հոգին ընծայացուին իրավունք է տալիս կատարել խորհուրդներն ու սնել Քրիստոսի հոտը:

Իրապես, մկրտությամբ բոլոր քրիստոնյաները աշխարհիկ «քահանայության» շնորհով են օժտվում, այն առումով, որ պարտավորվում են հոգեւոր զոհագործությամբ զոհաբանություն մատուցել Աստծուն՝ իրենց աղոթքներով, հույսով, հավատքի գործերով եւ բարեգործությամբ: Սակայն միայն նրանք, ովքեր արժանանում են Ս. Ձեռնադրության խորհրդին, բառիս բուն իմաստով կարող են կոչվել Աստծո հոգեւորականներ:

Ձեռնադրության խորհուրդը միշտ կատարվում է եպիսկոպոսի կողմից: Եկեղեցում կան հոգեւորականների տարբեր աստիճաններ, հետեւաբար կան նաեւ տարբեր արարողություններ, որոնցով տրվում է այս աստիճաններից յուրաքանչյուրը: Ինչեւէ, այդ բոլոր արարողություններն ունեն ընդհանրություն. եպիսկոպոսը ձեռքը դնում է կրոնական աստիճան, կարգ կամ իշխանություն ստացողի գլխին: Իր օծյալ աջը ընծայացուի գլխին դնելով՝ շարունակվում է Առաքելական իշխանության հաջորդականությունը, որը նախապես առաքյալներից տրվել էր Եկեղեցու եպիսկոպոսներին եւ մինչ օրս մեզ է հասել ձեռնադրության միջոցով:

Բացի եպիսկոպոսից հոգեւոր այլ աստիճանների ձեռնադրության համար բավական է մեկ խորհրդակատար եպիսկոպոսի ներկայությունը: Եպիսկոպոսական օծումը, ըստ Հայ Եկեղեցու կանոնների, կատարվում է կաթողիկոսի կողմից՝ առնվազն երկու եպիսկոպոսների մասնակցությամբ: Ձեռնադրության ժամանակ աշխարհականների համաձայնությունը արտահայտվում է երգչախմբի կողմից, որը երգում է. «Արժանի է»:

Բացի հիմնական նվիրապետական կարգերից Հայ Եկեղեցին ունի նաեւ չորս խոնարհ պաշտոնեություններ կամ փոքր աստիճաններ, որոնք թեկնածուն պետք է անցնի ավելի բարձր աստիճաններ ստանալու կամ ձեռնադրվելու համար:

Փոքր աստիճաններ (խոնարհ պաշտոնեություններ)

Այս չորս աստիճաններն արդեն ստացած անձը կոչվում է դպիր: Այս աստիճանների միջոցով դպիրը ստանում է հատուկ արտոնություններ, որոնք, իբրեւ եկեղեցական արարողությունների մասնակից, նրա ծառայության հիմքն են հանդիսանում: Դպրությունը բաղկացած է չորս աստիճաններից (պարտականություններ).

Դռնապան
Ընթերցող
Երդմնեցուցիչ
Ջահընկալ

Այս աստիճանները ստանալով անձը դառնում է փոխասաց:

Կիսասարկավագ ձեռնադրվելու համար առաջադրված պահանջները մեծ են: Մինչ կիսասարկավագի աստիճան ստանալը, թեկնածուն պետք է արդեն ունենա չորս փոքր աստիճանները: Կիսասարկավագի որոշ պարտականություններ համընկնում են սարկավագի պարտականությունների հետ, սակայն կան նրա իրավունքների ու պարտականությունների որոշ սահմանափակումներ, քանի որ նրա կարգը չի կարող արտացոլել լիարժեք սարկավագի իրավունքները: Կիսասարկավագությունը միջանկյալ աստիճան է դպիրի ու սարկավագի միջեւ, որը եկեղեցու երիտասարդ սպասավորին նախապատրաստում է ավելի լիարժեք ծառայության:

Եկեղեցական հիմնական աստիճանները

Սկզբում Առաքյալները եկեղեցու միակ հոգեւորականներն էին: Նրանք էին եկեղեցու ուսուցիչները, առաջնորդներն ու խորհրդակատարները, եւ նույնիսկ նրանք էին բավարարում հավատացյալների նյութական կարիքները: Ինչեւէ, եկեղեցու անդամների թվի աճի հետ մեկտեղ առաքյալներն իրենց օգնականներ ընտրեցին: Առաջին կարգը որ նրանք հաստատեցին, սարկավագությունն էր: Առաջին սարկավագները ընտրվեցին հավատացյալների կողմից եւ նշանակվեցին ու ձեռնադրվեցին առաքյալների կողմից՝ օգնություն բաժանելու, ինչպես նաեւ սպասարկելու համար սեղանները, որոնց ժամանակ կատարվում էր Սուրբ Հաղորդություն, (Գործք. Զ 1-7): Ներկայումս սարկավագներն օգնում են եպիսկոպոսին ու քահանային Սբ. Պատարագ մատուցելիս. նրանք երգում են, խնկարկում ու ընծաները բերում Ս. Խորան:

Առաքյալները նաեւ ընտրում, նշանակում կամ ձեռնադրում էին այլ սպասավորների, ովքեր օգնում էին նրանց դարձի եկածներին մկրտելիս, Սուրբ Հաղորդության եւ եկեղեցական այլ արարողությունների ժամանակ: Այս մարդկանց անվանում էին Ավագներ: Նրանք այսօրվա քահանաների նախորդներն էին (հունարեն լեզվով ավագին անվանում էին «Պրեսբյուտեր», որից ծագել է անգլերեն «priest» բառը): Քահանաները կարող են կատարել բոլոր խորհուրդները, բացի ձեռնադրությունից. նրանք եպիսկոպոսի իշխանությանը ենթակա տեղական եկեղեցիների առաջնորդներն ու հովիվներն են: Հայ Եկեղեցում քահանան իր իշխանությունը ստանում է եպիսկոպոսից՝ ձեռնադրության եւ Սուրբ Մյուռոնով օծման ժամանակ: Քահանայական ձեռնադրության խորհրդի ժամանակ եպիսկոպոսն իր ձեռքը դնում է թեկնածուի գլխին: Ձեռնադրության խորհուրդը կատարվում է Ս. Պատարագի ընթացքում: Ձեռնադրվողին քահանայական հանդերձներ հագցնելիս, եպիսկոպոսը մյուռոնով խաչաձեւ օծում է նրա ճակատն ու ձեռքերի ափերը: Քահանայական ձեռնադրության խորհուրդն անկրկնելի է: Երբ կարգը թողած կամ կարգալույծ եղած քահանան թողություն է ստանում եւ նրա իշխանությունը վերականգնվում է, նա երկրորդ անգամ չի ձեռնադրվում: Սակայն այն խորհուրդները, որոնք նա կատարել էր կարգալույծ եղած ժամանակ, համարվում են անընդունելի:

Առաքյալները մի քաղաքում կամ երկրում մշտապես չէին մնում կամ բնակվում: Մեր Տերը նրանց պատվիրել էր շրջել աշխարհի բոլոր կողմերով եւ քարոզել քրիստոնեությունը: Այդ իսկ պատճառով մինչ որեւէ քաղաք կամ երկիր լքելը, ուր նրանք արդեն հիմնել էին եկեղեցիներ, այնտեղ նշանակում էին ունակ եւ վստահելի անձանց, ովքեր կհսկեին տվյալ տարածքի քրիստոնյա համայնքներին ու կգործեին առաքյալների անունով՝ լիարժեք իշխանությամբ: Նրանք առաքյալների հետնորդներն էին իրենց շրջանում, լիներ դա քաղաք, գավառ թե նահանգ: Նրանց անվանում էին եպիսկոպոս, որը հունարեն բառ է եւ նշանակում է «վերակացու»: Եպիսկոպոսները՝ առաքյալների լիիրավ հետնորդները, եկեղեցու տարբեր թեմերի առաջնորդներն են: Միայն նրանք կարող են կատարել ձեռնադրության խորհուրդները: Ըստ Հայ Եկեղեցու կանոնների միայն եպիսկոպոսներն իրավունք ունեն օծել եկեղեցիներ, խորաններ ու մկրտության ավազաններ: Հայ Եկեղեցում եպիսկոպոսը ձեռնադրվում եւ օծվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ: Ձեռնադրության ժամանակ, ի նշան իր իշխանության եպիսկոպոսը ստանում է եպիսկոպոսական գավազան ու մատանի: Սովորաբար եպիսկոպոսներն ընտրվում են այն կուսակրոն քահանաների միջից, ովքեր արդեն հասել են վարդապետական աստիճանի:

Եպիսկոպոսից բարձր են արքեպիսկոպոսի, պատրիարքի ու կաթողիկոսի աստիճանները: Վարչական հարցերում նրանք ունեն ավելի բարձր իշխանություն ու իրավասություններ:

Իր հին եւ բուն իմաստով արքեպիսկոպոսը առաջնորդ էր, որն ուներ իր փոխանորդ եպիսկոպոսները, ովքեր օգնում էին նրան թեմը ղեկավարելիս:

Հույներն արքեպիսկոպոս բառի փոխարեն օգտագործում են միտրոպոլիտ բառը: Ներկայումս Հայ Եկեղեցում Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից արքության պատիվ տրվում է այն եպիսկոպոսներին, ովքեր տարիների իրենց վաստակով ու գործունեությամբ վաստակել են այն: Արքության պատիվը տրվում է Հայրապետական Կոնդակով:

Պատրիարքի աստիճանն ամենաբարձրն է Հույն Եկեղեցում: Ինչեւէ, Հայ Եկեղեցում պատրիարքը նույն արքեպիսկոպոսն է, որն ընտրվել է ծառայելու համար իբրեւ երկու՝ Երուսաղեմի եւ Կոստանդնուպոլսի պատմական պատրիարքական Աթոռներից մեկի պատրիարք: Պատրիարքներն անկախ են իրենց իրավասության սահմաններում առկա բոլոր տեսակի վարչական հարցեր լուծելիս:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի տիտղոսը Հայ Եկեղեցու ամենաբարձր աստիճանն է: Ամենայն Հայոց Կաթողիկոսն աշխարհասփյուռ Հայ Եկեղեցու հոգեւոր առաջնորդն է: «Կաթողիկոս» բառը հունարեն է եւ նշանակում է ընդհանրական կամ համընդհանուր: Կաթողիկոսն ընտրվում է եպիսկոպոսաց դասից եւ համարվում է «առաջինը հավասարների մեջ»: Կաթողիկոսին օծում են 12 եպիսկոպոսներ:

Հոգեւոր աստիճանների տիտղոսներ

Ձեռնադրվելիս բոլոր հեգեւորականները ստանում են քահանայի տիտղոս: Քահանան ինքն է որոշում ինչպես ընթանալ իր ընտրած ուղիով (հասնել ավելի բարձր աստիճանների թե ոչ):

Եթե քահանան որոշում է չամուսնանալ եւ իր ողջ կյանքը Եկեղեցուն նվիրել, դառնում է աբեղա: Իր ձեռնադրման օրը՝ երեկոյան նա կուսակրոնության երդում է տալիս: Նրան տալիս են վեղար՝ գլխի հատուկ ծածկոց, որը խորհրդանշում է աշխարհիկ կյանքից հրաժարվելը:

Համապատասխան կրթություն ստանալուց եւ իր ընտրած թեմայով ավարտաճառ պաշտպանելուց հետո աբեղան ստանում է վարդապետի աստիճան: Դա նշանակում է, որ նա դառնում է Եկեղեցու վարդապետ եւ ստանում վարդապետական գավազան կրելու իրավունք: Գիտական աստիճան ստանալով, վարդապետը ստանում է նաեւ երկգլխանի օձով գավազան, որը խորհրդանշում է իմաստություն եւ իշխանություն՝ ուսուցանելու եւ քարոզելու: Վարդապետությունը հավասար է աստվածաբանության մագիստրոսի գիտական աստիճանին:

Ծայրագույն վարդապետի աստիճան տրվում է այն քահանաներին ովքեր իրենց լավ են դրսեւորել աստվածաբանության, կրոնական ուսմունքների, Սուրբ Գրոց եւ այլ

ոլորտներում, հաջողությամբ պաշտպանել են ծայրագույն վարդապետական թեզը: Արեւմտյան Եկեղեցում այն համապատասխանում է Աստվածաբանության դոկտորի աստիճանին: Միայն ծայրագույն վարդապետի աստիճան ստացած եպիսկոպոսներն են իրավասու ծայրագույն վարդապետների տվչության կարգն իրականացնելու:

Թեմի առաջնորդը բարձրաստիճան հոգեւորական է, որն ունի ամենաբարձր հեղինակությունը տվյալ թեմում: Նա կարող է եպիսկոպոսից ցածր լինել աստիճանով, սակայն նույնիսկ, եթե տվյալ թեմում կան իրենց վաստակած հանգստին անցած եպիսկոպոսներ կամ արքեպիսկոպոսներ, վարչական հարցերում նրանք ենթարկվում են առաջնորդին:

Ավագության պատիվ տրվում է այն ամուսնացյալ քահանաներին, ովքեր երկար տարիներ իրենց պտղաբեր ծառայությունն են մատուցել եկեղեցուն կամ մեծ ներդրում են ունեցել եկեղեցու կյանքում:

«Դրա համար հիշեցնում եմ քեզ, որ վերարծարծես Աստծու շնորհը, որ կա քո մեջ իմ ձեռնադրությամբ տրված», գրում է Ս. Պողոս Առաքյալը իր աշակերտ Տիմոթեոսին, (Բ Տիմ. Ա 6). Շնորհի «ընծայումը», որ ձեռնադրության ժամանակ տրվում է հոգեւորականներին, հոգեւոր իշխանություն է՝ իր պարտականությունները արժանավայել ու Աստվածահաճո կերպով կատարելու եւ իր կոչումով ճշմարիտ եւ առաքինի կյանքով ապրելու համար:

Մարդիկ կարող են իրենց կյանքը նվիրել Եկեղեցուն ծառայելուն նաեւ աշխարհիկ ձեւով, առանց որեւէ եկեղեցական կարգ ստանալու: Երբեմն նման ծառայությունը նույնքան արժանավոր ու կարեւոր է Աստծու առջեւ, որքան հոգեւոր աստիճան ընդունածներինը: